ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԽՈՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մայիսյան փողոցն անվանափոխել թատրոնի և կինոյի անվանի դերասան, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Խորեն Աբրահամյանի անվամբ՝ «Խորեն Աբրահամյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԽՈՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորեն Աբրահամյանը ծնվել է 1930 թվականի ապրիլի 1-ին, Երևանում:

1951 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը:

1974-1984 թվականներին եղել է Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր ռեժիսորը, 1988-1995 թվականներին՝ գեղարվեստական ղեկավարը, միաժամանակ՝ Հայաստանի թատերական գործիչների միության վարչության նախագահը:

1985-1988 թվականներին եղել է Լենինականի պետական թատրոնի (այժմ՝ Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն) դերասան և գլխավոր ռեժիսորը:

1980-1995 թվականներին դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում:

1969 թվականին արժանացել է ՀԽՍՀ, 1980 թվականին՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչմանը, 1981 թվականին՝ ԽՍՀՄ պետական մրցանակի, 2000 թվականին՝ «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչմանը և ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի:

Թատրոնի և կինոյի անվանի դերասան Խորեն Աբրահամյանը մասնակցել է բազմաթիվ ռադիո և հեռուստաբեմադրությունների, նկարահանվել է նաև «Մոսֆիլմ» կինոստուդիայի կինոնկարներում: Թատրոնում կերտել է բազմաթիվ դերեր մի շարք ներկայացումներում, որոնցից են՝ Ա. Շիրվանզադեի «Նամուս» (Ռուստամ), Գ. Բորյանի «Կամրջի վրա» (Արմեն), Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» (Արա), Գ. Սունդուկյանի «Պեպո» (Պեպո), Վ. Շեքսպիրի «Կորիոլան» (Կորիոլան), «Օթելլո» (Օթելլո), Պ. Զեյթունցյանի «Անավարտ մենախոսություն» (Ավետյան), «Ավերված քաղաքի առասպելը» (Արշակ թագավոր) և այլն: Նկարահանվել է հայկական մի շարք ֆիլմերում՝ «Առաջին սիրո երգը» (Արսեն, 1958թ.), «Սարոյան եղբայրներ» (Գևորգ, 1968թ.), «Տերը» (Ռոստոմ, 1968թ.), «Մենք ենք, մեր սարերը» (Պավլե, 1969թ.), «Երևանյան օրերի խրոնիկա» (Արմեն, 1972թ.) «Երկունք» (Մյասնիկյան, 1977թ.), «Հուսո աստղ» (Տեր-Ավետիս, 1978թ.), «Ապրեցեք երկար» (Սիսակյան,1979թ.) և այլն:

Խորեն Աբրահամյանը մահացել է 2004 թվականի դեկտեմբերի 10-ին, Երևանում:

Հաշվի առնելով, որ Երևան քաղաքում կա նաև Մայիսի 9-ի փողոց, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 16-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մայիսյան փողոցն անվանափոխել Խորեն Աբրահամյանի անվամբ՝ «Խորեն Աբրահամյան փողոց»։

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԽՈՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Մայիսյան փողոցը Խորեն Աբրահամյան փողոց անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԽՈՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Մայիսյան փողոցը Խորեն Աբրահամյան փողոց անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ